## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 109-Ա

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԱՐՏԵՄ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով , ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Արտեմ Ավետիսյանի հայտը՝ **որոշում եմ .**

1.Կառուցապատող Արտեմ Ավետիսյանին տալ շինարարության թույլտվություն ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող , բնակավայր Շնող, փողոց 9 , թիվ 33/5 հասցեի հողամասի (ծածկագիր՝ 06-088-0272 -0086, վկայական N 18112021-06-0034) վրա կառուցված հյուրանոցային համալիրի երրորդ հարկի և ձեղնահարկի կառուցման աշխատանքների համար՝ համաձայն հաստատված նախագծի :
2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունն սկսելուց 3 օր առաջ ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք՝ շինարարությունն սկսելու վերաբերյալ :
3. Պարտավորեցնել կառուցապատող Արտեմ Ավետիսյանին՝ Շնողի համայնքապետարանի 900265146283 հաշվեհամարին վճարել 37500 (երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար: 4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 110-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 13 ՄԱՅԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով ,33-րդ,34-րդ   հոդվածներով՝ **որոշում եմ .**

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 13 մայիսի 2022  թվականի թիվ 106-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 1-ին կետի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայր Շնող, փողոց 1, թիվ 134 (ծածկագիր՝ 06-088-0267-0022, վկայական թիվ 05052022-06-0023) հասցեի հողամասում» արտահայտությունը կարդալ նոր՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Շնող, բնակավայր Շնող, փողոց 1, թիվ 134/1  (ծածկագիր՝ 06-088-0267-0022, վկայական թիվ 05052022-06-0023) հասցեի  հողամասում» արտահայտությամբ :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**   **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 8 20 մայիսի 2022 թ.

Օբյեկտ՝ Թռչնաբուծական տնտեսության կառուցում՝ փոփոխելով հողամասի նշանակությունը որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների գյուղատնտեսական օբյեկտների հողամասի

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն) (հակիրճ բնորոշումը, հզորությունը

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

1-ին ռիսկայնության աստիճան, 1 նախագծային փուլով

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Լոռու մարզ Շնող համայնք, գյուղ Շնող, փողոց 1, հողամաս 134/1 , 06-088-0267-0022

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Վարդան Վոլոդյայի Վարդանյան (ՀՀ Լոռու մարզ,համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 8, փակուղի 1,թիվ 9, հեռ 055 66 26 90)

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ կառուցապատողի հայտ, սեփ. վկայական 05052022-06-0023

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

6/վեց/ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

### ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ______________________

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ ______________________

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ _առանձնացնել շին հրապարակը______________________

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) ______________________

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ______________________

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 ,Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմերը շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ______________________

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ______________________

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ______________________

9.7. այլ պահանջներ ______________________

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ______________________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ______________________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում Կցվում է______________________

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է______________________

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է______________________________
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է______________________________
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ______________________________

12.6. աղբահանություն ______________________________

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում ______________________________
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում ______________________________
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր _տեղական շին նյութեր__ ____________________
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ ___ըստ նորմատիվ ակտերի ____________________
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ _ ըստ նորմատիվ ակտերի ____________________
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ _ ըստ նորմատիվ ակտերի ____________________

19. Շրջակա միջավայրի պահպանում ___ ըստ նորմատիվ ակտերի ____________________
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում _____ ըստ նորմատիվ ակտերի ____________________
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը _6/վեց/ ամիս 1 փուլով____________________
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ _______չի պահանջվում____________________
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում չի պահանջվում ____________________
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ __չի պահանջվում ____________________
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում ____առկա է ՔԾՓԿ ԲԲԸ 26-04-2022 թվականի եզրակացություն__________
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում _______չի պահանջվում____________________

27. Այլ պայմաններ Նշված հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվել է Շնող համայնքի ավագանու թիվ 34-Ա որոշման հիման վրա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ Դ.ՂՈՒՄԱՇՅԱՆ
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ
МУНИЦИПАЛИТЕТ ШНОХ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ РА
SHNOGH MUNICIPALITY LORI REGION RA
06954224

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 111-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով,42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 15 ապրիլի 2022 թվականի թիվ 34-Ա և ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 13 մայիսի 2022 թվականի՝ «Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին)» թիվ 106-Ա և 20 մայիսի 2022 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 13 մայիսի 2022 թվականի թիվ 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 110 որոշումները՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0267-0022 ծածկագրի 0,01315 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 1, հողամաս 134/1 փոստային հասցեն:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 13 մայիսի 2022 թվականի թիվ 107-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 112-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-078-000003 ծածկագրի 0,176 հա հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 5, 1-ին նրբանցք, թիվ 5 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20__ թ. ________________ ____
գ.Շնող

ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ШНОХ LORI REGION SHNOGH MUNICIPALITY ՀՀ РА 06954224

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 113-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0057-0009 ծածկագրի 0,072 հա հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 11, թիվ 26 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20__ թ. ________________ _____
գ.Շնող

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 114-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-006-000001 ծածկագրի 0,103 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 12, թիվ 60 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20__ թ. ________________ _____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 115-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 01 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով ,33-րդ,34-րդ,37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ .**

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 01 ապրիլի 2022 թվականի թիվ 72-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի, և հաստատել փոփոխված գնումների նոր պլանը:

2.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 01 ապրիլի 2022 թվականի թիվ 72 -Ա որոշումը :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 116-Ա

### ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՇՆՈՂ, 16-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ « Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ նշված ինքնակամ կառուցած շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը հիմք ընդունելով հողամասի և շինության՝ «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը՝ **որոշում եմ.**

1. Օրինականացնել Սամվել Մկրտումյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող, 2020 թվականին կառուցված, ՀՀ կադաստրի կոմիտեում 2022HRTNWD ծածկագրով հաշվառված, ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, գյուղ Շնող, 16 փողոց , 1-ին փակուղի, թիվ 8 հասցեի հողամասում (ծածկ.՝ 06-088-0286-0033) ինքնակամ կառուցած շինությունները՝ 140.4 ք.մ արտաքին մակերեսով տունը, 8.35 արտաքին մակերեսով ծածկը, 134 քմ արտաքին մակերեսով անասնագոմը:
2. Նշված շինությունների օրինականացման համար ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն սահմանել վճար՝ 167 360 (մեկ հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով /վճարումը կատարվում է Շնողի համանքապետարանի 900265146291 հաշվեհամարին:
3. Սույն որոշման 2-րդ կետով սանմանված վճարները ինքնակամ կառույցը իրականացրած անձանց /անձի/կողմից 60/վաթսուն/ օրյա ժամկետում չկատարելու դեպքում , որոշումը համարվում է ուժը կորցրած
4. Նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
5. Նշված շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ Ս. Մկրտումյանի դիմումը, սեփ. վկայականի պատճենը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 117-Ա

## ՎՈԼՈԴՅԱ ԼԵՎՈՆԻ ԵՍԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՇՆՈՂ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ « Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ նշված ինքնակամ կառուցած շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը հիմք ընդունելով հողամասի և շինության` «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը` **որոշում եմ.**

1. Օրինականացնել Վոլոդյա Լևոնի Եսայանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող, 2021 թվականին կառուցված, ՀՀ կադաստրի կոմիտեում 20220MA8BY ծածկագրով հաշվառված, ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, գյուղ Շնող, 5-րդ փողոց , թիվ 4/1 հասցեի հողամասում (ծածկ.` 06-088-0081-0008) ինքնակամ կառուցած շինությունները` 44,8 ք.մ արտաքին մակերեսով ավտոտնակը 7,2 արտաքին մակերեսով պարիսպը :
2. Նշված շինությունների օրինականացման համար ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն սահմանել վճար` 38636 (երեսունութ հազար վեց հարյուր երեսունվեց) ՀՀ դրամի չափով /վճարումը կատարվում է Շնողի համանքապետարանի 900265146291 հաշվեհամարին:
3. Սույն որոշման 2-րդ կետով սանմանված վճարները ինքնակամ կառույցը իրականացրած անձանց /անձի/կողմից 60/վաթսուն/ օրյա ժամկետում չկատարելու դեպքում , որոշումը համարվում է ուժը կորցրած
4. Նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
5. Նշված շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք` Վ. Եսայանի դիմումը, սեփ. վկայականի պատճենը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 118-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Քարկոփ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-111-010-0001 ծածկագրի 9.0382 հա հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Քարկոփ բնակավայր, փողոց 1, արտադրամաս 12/2 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 __ թ. ________________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 119-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՔԱՐԿՈՓ, ՓՈՂՈՑ 1, 12/2 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ «ԱՅՐՈՒՄԻ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ԲԲԸ-Ի ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ և ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ , ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ և ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստաված կարգով, ՀՀ կառավարության 15/11/2005 թվականի թիվ 2248-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 19/05/2022 թվականի թիվ ԱՏ-19052022-06-0495 տեղեկանքը, հաշվիառնելով, որ27/04/2017 թվականի թիվ 822 վարձակալության պայմանագիրը, կադաստրի կողմի տրամադրված 959742 սեփականության վկայականը, հիմքընդունելով <<ՏՍՈՒԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմիցտրվածհողամասիհատակագիծը ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերակագնել և ճանաչել «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի վարձակալության իրավունքը Շնող համայնք, գյուղ Քարկոփ, փողոց 1, արտադրամաս 12/2 փոստային հասցեով , կադաստրային քարտեզի 06- 111-0101-0001 ծածկագրում գտնվող, 9,0382 հա հողամասի և հողամասում առկա շինությունների նկատմամբ ճանաչելով վերջինիս սեփականության իրավունքը:
2. Շնող համայնք, գյուղ Քարկոփ, փողոց 1, արտադրամաս 12/2 փոստային հասցեումգտնվողանշարժգույքիզբաղեցրածհողամասը համաձայն որակավորված անձի կողմից կազմված հողամասի հատակագծի տեղադրել կադաստրային քարտեզում:
3. Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2021 թվականի « ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 698-Ն որոշման 42-

րդ հոդվածով նշված գույքի զբաղեցրած հողամասի նպատակային և գործառնական նշանակություններ ը Շնող համայնքի Քարկոփ բնակավայրի կադաստրային քարտեզում և սեփականության վկայականում հաստատել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամաս:

4. Օրենքով սահմանված կարգով թիվ 959742 վկայականով գրանցված գույքի նկատմամբ կատարել իրավունքի պետական գրանցում՝ վերագրանցում, քանի որ «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված համաձայնագրի հիման վրա նախկինում գրանված 15,666 հա հողամասից 6,52 հա հողամասը առանձնացվել է և փոխանցվել է իրավունքի այլ սուբյեկտի, իսկ «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի իրավունքը վերագրանցում չի ստացել, ուստի սույն որոշման և որակավորված՝անձի կողմից տրամադրված հատակագծերի հիման վրա «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Հողամասի սահմանները, գծային չափերը և մակերեսը որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված և որակավորված անձի կողմից տրված հատակագծի համաձայն:

6. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման

7 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____

գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 120-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29-12-2005 թվականի 2387 Ն որոշմամբ՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կադաստրային քարտեզի 06-088-0001-0021 ծածկագրի 0,096 հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Շնող համայնք, Շնող բնակավայր, փողոց 12, թիվ 45 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ______________ ____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 121-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի ԹԻՎ 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով ՝ **որոշում եմ .**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի 2018թ-ի փետրվարի 20-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 111-Ա որոշման հավելված 7-ում կատարել լրացումներ. որոշմամբ հաստատված թիվ 7 հավելվածի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բաժնում ավելացնել նոր կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

ժե) Ձևակերպում է համայնքի տնտեսական զարգացման ընդհանուր տեսլականը և նպատակները

ժզ) Կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրից բխող տեղական տնտեսական զարգացման պլանի և տարեկան աշխատանքային պլանի նախագծերը, ինչպես նաև այդ ծրագրի իրականացման նկատմամբ անց է կացնում մշտադիտարկում՝ համագործակցելով համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և համապատասխան պետական մարմինների հետ. ժէ) առկա բյուջեի և համայնքապետարանի կողմից սահմանված առաջնահերթությունների շրջանակներում մշակում է գործողությունների պլան և իրականացնում այն.

ժը) աջակցում է համայնքի տնտեսական զարգացմանը և կայուն աշխատատեղերի ստեղծմանը.

Ի) Համապատասխանեցնում է տեղական տնտեսական զարգացման պլանը առկա այլ փաստաթղթերի, ներառյալ՝ մշակված ռազմավարությունների, ծրագրերի և մասնավոր հատվածի պլանների հետ.

Լ)Համագործակցում է համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների, տնտեսական զարգացման նպատակ հետապնդող պետական այլ հաստատությունների, տեղական ձեռնարկությունների, պոտենցիալ ներդրողների և հասարակական կազմակերպությունների հետ

Խ) վարում է համայնքի (բնակավայրերի) վարչական շտեմարանը.

Ծ) Նախաձեռնում է համայնքում գործարար միջավայրի զարգացմանն ուղղված գործողություններ

Կ) Կազմում է համայնքի սուբվենցիոն ծրագրերի հայտերը, փաստաթղթեր նախապատրաստում և մասնակցում ծրագրերի իրականացման աշխատանքներին.

Հ) Կազմում է .դրամաշնորհային ծրագրերի մասնակցության պայմանագրեր և ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը.

Ձ) Բացահայտում է տեղական գործարարության զարգացման կարիքները և աջակցություն

ցուցաբերում արդյունավետ մարքեթինգային խրախուսման միջոցառումների իրականացմանը՝ ներդրումների ներգրավման նպատակով.

Ղ) Գույքագրում է հյուրանոցային տնտեսությունները ու զբոսաշրջության բնագավառում համագործակցում հյուրանոցային տնտեսությունների և այլ կազմակերպությունների հետ

Ճ) համայնքի բնակչության համար կազմակերպում է հանգստի վայրեր և համայնքի տարածքում զարգացնում տուրիզմը.

Մ) Կազմում է տարածաշրջանի տեսարժան վայրերի, պատմամշակութային կոթողների, հուշահամալիրների ուղեցույցներ

Յ) Խթանում է համայնքի տարածքում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը

Ն) Իրականացնում է զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումներ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 __ թ. ______________ _____

գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 122-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ, 13-ՐԴ, 14-ՐԴ, 15-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՋՐԱՖԻԿԱՑՄԱՆ, ՋՐԱՄԲԱՐԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 7-րդ գլխի 147-րդ կետով՝ **որոշում եմ.**

Շնող համայնքի՝ 2021 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացված՝ Շնող բնակավայրի 12-րդ,13-րդ, 14-րդ ,15-րդ փողոցների ջրաֆիկացման, ջրամբարի և պոմպակայանի կառուցման աշխատանքների ավարտական ակտի ընդունման համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Ղումաշյան - Շնող համայնքի ղեկավար
Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Ճիճիյան - Շնողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
անդամներ՝ Սամվել Մկրտումյան -համայնքի ղեկավարի տեղակալ,
Սերգեյ Մաշինյան -«Շնողի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տնօրեն
Տիգրան Արշակյան - «ՓԱՅԼՔ» ՍՊԸ -ի տնօրեն, կապալառու կազմակերպության ներկայացուցիչ
Տիգրան Պողոսյան - «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ
Նարեկ Թովմասյան- «ԳԵՈՔԱՐՏ»ՍՊԸ-ի տնօրեն, հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ
Վահրամ Ղարսայան - ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Աշոտ Նալբանդյան-ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի գլխավոր մասնագետ
Սահակ Ավագյան -ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի ավագ մասնագետ: 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ________________ _____
գ.Շնող